Նոտարական ակտի կոդ: 745-20170607-88-1340979
Նոտարական ակտի գաղտնագիր: EG2Y1R

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՊԱՅՄԱՆԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ք.Իջևան Երկու հազար տասնյոթ թվականի հունիսի տասնվեցին

Մենք՝ **Գերման Աշոտի Վարդապետյանս,** ծնված՝ 22.05.1999թ., անձն. AP0424859, տրվ. 11.02.2016թ. 013-ի կողմից, բնակության հասցե՝ՀՀ, ք.Երևան, Դավթաշեն, 4-րդ թղմ., շ. 2ա /երկու "ա"/, բն. 6 /վեց/ հասցեում, այսուհետ նաև՝ Կողմ-1 և **ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը**, ՀՎՀՀ 01223338, գտնվելու վայրը՝ ՀՀ ք.Երևան, Հալաբյան 41ա հասցեում, որի անունից համաձայն լիազորագրի տրված 02.06.2017թ. Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարող Ա.Հարությունյանի կողմից, հանդես է գալիս **Վահե Աշոտի Մովսիսյանը,** ծնված՝ 06.05.1967թ., անձն. AM0372414, տրված 012-ի կողմից 12.07.2011թ., բնակության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ֆուչիկի փող., 1-ին նրբ., շ. 15 /տասնհինգ/, բն. 8 /ութ/ հասցեում, այսուհետ նաև՝ **Կողմ-2** մյուս կողմից, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ղեկավարվելով իրենց միջև 2017թ. փետրվարի 15-ին կնքված և Իջևան նոտարական տարածքի նոտար Ա.Ամիրխանյանի կողմից գրանցամատյան թիվ 263 համարով վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Պայմանագրի 6-րդ կետը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«6.**Հատուկ պայմաններ»**

« 6.1.Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«6.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բացթողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

6.3. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռքբերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

6.4. Եթե տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա կողմերի հետագա պարտավորությունները շարունակվում են համաձայնագիր կնքելու միջոցով:

6.5. Եթե Վարձակալը պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

6.6.Վարձակալը սույն պայմանագրում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարված վարձավճարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսիչափով: Վարձավճարի չվճարման յուրաքանչյուր ժամկետանց օրվա ամար Վարձակալը վճարում է տույժ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

6.7. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

6.8. Եթե պայմանագրի կնքումից հետո ի հայտ են գալիս թերություններ, որոնք Վարձատուն չի նշել սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի չի եղել Վարձակալին, Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին

1.2 Սույն համաձայնագիրը կազմված է չորս օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը, մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվում է կողմերին:

1.3 Սույն համաձայնագիրը ենթակա է պետական գրանցման ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում: Համաձայնագրի կնքման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են Կողմ-2-ի կողմից:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կողմ-1՝
Գերման Աշոտի Վարդապետյան

Կողմ-2
ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Լ/անձ Վահե Աշոտի Մովսիսյան

ՀՀ ք.Իջևան Երկու հազար տասնյոթ թվականի հունիսի տասնվեցին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Իջևան նոտարական տարածքի նոտար՝ **Անուշ Արտավազդի Ամիրխանյանիս** կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է Կողմերի կողմից իմ ներկայությամբ, նրանց ինքնությունը, գործունակությունը, իրավունակությունը և լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում 1239-ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Անուշ Ամիրխանյան